Կարգապահական գործ թիվ 17194

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի հուլիսի 24-ի թիվ 193-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/141-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Կարեն Հովհաննիսյանին (արտոնագիր՝ թիվ 1212) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

11.12.2017թ. Պալատ մուտքագրվել է Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև՝ Դիմող կամ Դատարան)** դատավոր Հ. Պետրոսյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 30.11.2017թ. որոշումը **(այսուհետ նաև՝ Որոշում կամ Դատական սանկցիա)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԱՎԴ1/0042/01/17 քրեական գործի 30.11.2017թ. հերթական դատական նիստում ամբաստանյալ Վահան Սիմոնյանի պաշտպան Կարեն Հովհաննիսյանը Դատարանին հայտնել է, որ գործի քննությունը չի կարող շարունակվել, քանի որ ինքնաբացարկ հայտնելու մասին նախկին որոշումն իր կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

Դատարանը կողմերին պարզաբանել է, որ որոշման բողոքարկումը չի կարող խոչընդոտ հանդիսանալ դատական քննությունը շարունակելու համար, ինչին ի պատասխան՝ պաշտպան Կարեն Հովհաննիսյանը հայտարարել է, որ ի նշան բողոքի՝ ինքը լքում է դատական նիստերի դահլիճը:

Դատարանը պաշտպան Կարեն Հովհաննիսյանին պարզաբանել է, որ չի թույլատրում նրան լքել դատական նիստերի դահլիճը, խնդրել է մնալ և պաշտպանել իր պաշտպանյալի շահերը, սակայն փաստաբան Կարեն Հովհաննիսյանը, այնուամենայնիվ, լքել է դատական նիստերի դահլիճը, իսկ ամբաստանյալ Վահան Սիմոնյանը շարունակել է մասնակցել դատական նիստին՝ զրկվելով իր շահերն իր պաշտպանի միջոցով պաշտպանելու հնարավորությունից:

Դատարանը Որոշմամբ գտել է, որ փաստաբան Կարեն Հովհաննիսյանն իր դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու միջոցով Դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք:

Դատարանը 30.11.2017թ. որոշում է կայացրել փաստաբան Կարեն Հովհաննիսյանի նկատմամբ կիրառել է դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով Պալատ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 28.12.2017թ. թիվ 488-Ա/ԿԳ-17194 որոշմամբ փաստաբան Կարեն Հովհաննիսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

29.12.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողի կողմից 07.02.2018թ. ստացվել է բացատրություն, որում նշվել է հետևյալը.

Դատավորի կողմից բազմիցս թույլ են տրվել ՀՀ օրենսդրության պահանջների ակնհայտ և կոպիտ խախտումներ, ինչի վերաբերյալ Պատասխանողը, գործելով գործով պաշտպանի կարգավիճակում, բազմիցս բարձրաձայնել է և հայտնել իր առարկությունները: Դատարանն անտեսել է այդ միջնորդությունները և շարունակել իր

ապօրինությունները, ինչից հետո, չունենալով այլ ելք, Պատասխանողը Դատարանին հայտնել է ինքնաբացարկի միջորդություններ, որոնք Դատարանի կողմից մերժվել են: Դատարանը, գտնելով, որ Պատասխանողի կողմից Դատարանի ինքնաբացարկի միջնորդության մերժման որոշումը վերադաս դատարան բողոքարկման պայմաններում, քանի դեռ չի ստացվել այդ հարցով վերջնական որոշում, ինքն իրավասու է շարունակել գործի քննությունը, անտեսել է ինքնաբացարկի միջնորդության բողոքարկման փաստը և շարունակել գործի քննությունը՝ խախտելով ՀՀ օրենսդրության և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը, փաստաբանի արժանապատվության իրավունքը, քանի որ ինքնաբացարկի միջնորդությունը հանդիսանում է դատարանի ապօրինությունների զսպման միջոց, որի անտեսման պարագայում նաև ոտնահարվում է փաստաբանի արժանապատվությունն ու դերը և այդպիսով ոտնահարելով Պատասխանողի վստահորդի շահերը:

Հաշվի առնելով Դատարանի ակնհայտ անհարգալից վերաբերմունքն օրենքի պահանջների և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների նկատմամբ, պարբերական բնույթի կողմնակալ վերաբերմունքի դրսևորումը՝ Պատասխանողը Դատարանի կողմից այդ արատավոր դրսևորումները կանխարգելելու այլ ելք չի ունեցել, քան ստիպված գնալ ծայրահեղ միջոցի՝ լքել դատական նիստերի դահլիճը՝ ի նշան բողոքի դատավորի ապօրինությունների դեմ: Պատասխանողը հակիրճ ներկայացրել է դատավորի կողմից, իր կարծիքով, թույլ տրված օրենքի խախտումները, այսպես՝

1. Դատավորն ի սկզբանե կանխակալ վերաբերմունք է դրսևորել տուժող կողմի նկատմամբ, մասնավորապես առանց նրանց ներկայացուցիչների՝ փաստաբաններ Երվանդ Վարոսյանի և Լուսինե Սահակյանի ինքնությունն ստուգելու և լիազորությունների բացակայության պայմաններում վերջիններիս թույլատրել է մասնակցել դատական նիստերին և կատարել դատավարական գործողություններ: Նշված հանգամանքը պարզվել է միայն Պատասխանողի պահանջի առկայության պայմաններում: Ապա՝ Պատասխանողի կողմից փաստաթղթի անմիջական ուսումնասիրությունից հետո պարզվել է, որ ներկայացուցիչները նիստեր շարունակ մասնակցել են դատական քննությանը և կատարել դատավարական գործողություններ՝ չունենալով լիազորություն, ինչի մասին Պատասխանողը բարձրաձայնել է, սակայն Դատարանը հայտարարել է, որ գրությունը, որում հիշատակված էր մեկ այլ քրեական գործի անվանում, հանդիսանում է պատշաճ լիազորագիր և ցանկացել է շարունակել գործի քննությունը, ապա շատ կարճ ժամանակ անց, գիտակցելով, որ խախտում է օրենքը, սեփական նախաձեռնությամբ հետաձգել է գործի քննությունը, որպեսզի տուժողի ներկայացուցիչները կարողանան ձեռք բերել լիազորագիր և մասնակցել գործի քննությանը: Ավելին՝ հաջորդ նիստին, որը տեղի է ունեցել մեկ շաբաթ հետո, երբ կրկին առկա չէր լիազորագիրը, առանց որևէ հիմնավորման՝ դատավորն ավելի քան մեկ ժամ չի բացել դատական նիստը, մինչև անհայտ անձի կողմից Դատարան է բերվել համապատասխան գրությունը, այլ ոչ թե լիազորագիրը, որը Դատարանը պատշաճ լիազորագիր է համարել՝ չնայած Պատասխանողի առարկությանը:

2. Պատասխանողի պաշտպանյալ ամբաստանյալ Վահան Սիմոնյանը Դատարանից գրավոր կերպով պահանջել էր տրամադրել քրեական գործի պատճանները, բայց

Դատարանը շուրջ 8 ամիս դրանք չէր տրամադրում, ինչի արդյունքում պաշտպանական կողմը տևական ժամանակ զրկված է եղել պատշաճ պաշտպանություն իրականացնելու իրական հնարավորությունից, և որպես արդյունք խախտվել են կողմերի մրցակցության, իրավահավասարության, Դատարանի անաչառության սկզբունքները:

3. Նշված քրեական գործով Դատարանը որպես ամբաստանյալ անցնող անձանց որպես վկա է հրավիրել՝ հարցաքննելու նախկինում առանձնացված գործից՝ ընդ որում, առանց այդ հարցը դատական նիստում քննարկման առարկա դարձնելու և սեփական նախաձեռնությամբ՝ առանց որևէ մեկի միջնորդության առկայության:

4. Պաշտպանական կողմը Դատարանին ներկայացրել է բազմաթիվ միջնորդություններ, այդ թվում այն գույքն արգելանքից ազատելու մասին, որն ապօրինի կերպով է արգելադրված՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման պահանջները, համաձայն որոնց՝ չի թույլատրվում արգելանք կիրառել այն հանցակազմերով, որոնց սանկցիայով նախատեսված չէ գույքի բռնագրավման լրացուցիչ պատժամիջոցը, սակայն Դատարանը, անտեսելով ՀՀ օրենսդրության և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման պահանջները, քննարկման առարկա չի դարձրել միջնորդությունը՝ անհիմն կերպով հետաձգելով միջնորդության քննարկումը՝ առանց պատշաճ հիմնավորման: Նշված և բազմաթիվ այլ խախտումները հաշվի առնելով՝ Դատարանին ներկայացվել են ինքնաբացարկի միջնորդություններ, որոնք Դատարանը մերժել է, ինչը պաշտպանական կողմը բողոքարկել է:

Պատասխանողը գտնում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և Կանոնագրքի 4.1 կետով իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը բացակայում են՝ հիմք ընդունելով վերոնշյալ հանգամանքները: Ուստի՝ ըստ Պատասխանողի՝ իր նկատմամբ վերը նշված երկու հիմքերով էլ կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ խախտման բացակայության հիմքով:

Պատասխանողը հայտնել է նաև, որ դատավոր Հ. Պետրոսյանի վարքագծի կապակցությամբ դիմել է ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովին՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու համար, որի օրինակը կցվել է Պատասխանողի բացատրությանը:

Խորհրդի նիստում Պատասխանողը վերահաստատել է կարգապահական գործի նախապատրաստման փուլում իր ներկայացրած բացատրությունում արտահայտված դիրքորոշումը՝ հավելելով հետևյալը: Դատարանը գործը քննել է ընդդատության կանոնների խախտմամբ և հանդիսացել է համապատասխան քրեական գործով ոչ իրավասու դատարան, ուստի՝ հետագայում այդ գործը փոխանցվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի, որը և իրավասու էր քննել տվյալ քրեական գործը: Սույն փաստը հաստատող Դատարանի 27.02.2018թ. որոշումը Պատասխանողը 12.03.2018թ. Պալատին հասցեագրված գրությամբ ներկայացրել է Պալատին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

28.02.2018թ. Նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որի համաձայն՝ հաստատված է համարվել հետևալ փաստը՝

30.11.2017թ. հերթական դատական նիստում Պատասխանող Կարեն Հովհաննիսյանը հայտարարել է, որ գործի քննությունը չի կարող շարունակվել, քանի որ ինքնաբացարկ հայտնելու մասին որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, ուստի՝ ի նշան բողոքի՝ լքում է դատական նիստերի դահլիճը:

Կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին 02.03.2018 թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 24.07.2018թ., ժամը 20:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7- 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Թիվ ԱՎԴ1/0042/01/17 քրեական գործով փաստաբան Կարեն Հովհաննիսյանը հանդիսանում է Վահան Սիմոնյանի պաշտպանը:

2. Թիվ ԱՎԴ1/0042/01/17 քրեական գործով Կարեն Հովհաննիսյանը ներկայացրել է նիստը նախագահող դատավոր Հ. Պետրոսյանի ինքնաբացարկի միջնորդություն, որը մերժվել է:

3. Փաստաբան Կարեն Հովհաննիսյանի կողմից թիվ ԱՎԴ1/0042/01/17 գործով դատավոր Հ. Պետրոսյանին ներկայացված միջնորդությունը Դատարանի կողմից մերժելու որոշումը Կարեն Հովհաննիսյանի կողմից բողոքարկվել է վերաքննիչ քրեական դատարան:

4. Դատարանը, գտնելով, որ Պատասխանողի կողմից Դատարանի ինքնաբացարկի միջնորդության մերժման որոշումը՝ վերադաս դատարան բողոքարկման պայմաններում, քանի դեռ չի ստացվել այդ հարցով վերջնական որոշում, ինքն իրավասու է շարունակել գործի քննությունը, շարունակել է գործի քննությունը:

5. Թիվ ԱՎԴ1/0042/01/17 քրեական գործով 30.11.2017 թվականի դատական նիստում փաստաբան Կարեն Հովհաննիսյանը, առանց նախագահող դատավորի

թույլտվության, լքել է դատական նիստերի դահլիճը:

6. Թիվ ԱՎԴ1/0042/01/17 քրեական գործը դատավոր Հ. Պետրոսյանի 27.02.2018թ. որոշմամբ փոխանցվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին, որն իրավասու էր քննել տվյալ քրեական գործը:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Որոշմամբ, Պատասխանողի 07.02.2018թ. և 24.07.2018թ. Խորհրդի նիստում տված բացատրություններով, Դատարանի 27.02.2018թ. որոշման պատճենով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Կարեն Հովհաննիսյանը փաստաբան է հանդիսանում 15.10.2011թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (1 ավարտված վարույթ)՝ որի մեջ չի հաշվարկվում սույն կարգապահական վարույթը:

Խորհրդի 26.01.2015թ.թիվ ԿԳ/11-Ա որոշմամբ Կարեն Հովհաննիսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 2.7.2 ենթակետի խախտման համար: Նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Տույժը մարված է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը, գտնում է, որ փաստաբան Կարեն Հովհաննիսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<u>7.1 Կանոնագրքի 4.1 կետի խախտման մասով.</u>

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝*

հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Այս կանոնը վկայակոչող է և հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորվող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է՝*

«(…)

2) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

3) մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը.

4) դատական նիստում պահպանել կարգուկանոն

(…)»:

Նշված կանոններից հետևում է, որ քրեական գործով պաշտպանն իրավասու չէ առանց նախագահող դատավորի թույլտվության լքել դատական նիստերի դահլիճը: Հետևաբար, այդպիսի վարքագիծ դրսևորած պաշտպանը խախտում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջները:

Խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանը, ունենալով առանձնահատուկ հասարակական կարգավիճակ, ունի իրավական և բարոյական պարտականությունների լայն շրջանակ: Փաստաբանը՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ, իրավունք ունի և պարտավոր է բարեխղճորեն պաշտպանել իր վստահորդների իրավունքներն ու օրինական շահերը՝ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով: Հետևաբար փաստաբանի պարտականությունների հասցեատերերը ոչ միայն վստահորդներն են, այլև արդարադատության գործառույթ իրականացնող մարմինները՝ դատարանները: Փաստաբանի այս երկակի կարգավիճակը բխում է Կանոնագրքի 1.1 ենթակետի պահանջներից, որի համաձայն՝ *փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Հաշվի առնելով փաստաբանի գործառույթների և դրանցից բխող պարտականությունների բազմազան բնույթը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնագրքով սահմանված են փաստաբանի այն հիմնական պարտականությունները, որոնք նա ունի ինչպես վստահորդի, այնպես էլ՝ դատարանի հետ հարաբերություններում: Մասնավորապես, դատարանի հետ փաստաբանի հարաբերությունների կանոնակարգմանն է նվիրված Կանոնագրքի 4.1 կետը, որը, լինելով բլանկետային իրավադրույթ՝ հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորվող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

Սույն գործի շրջանակներում իրավական նշանակություն ունեն փաստաբանի հետևյալ դատավարական պարտականությունները՝ ներկայանալ վարույթ իրականացնող մարմնի՝

տվյալ դեպքում՝ դատարանի կանչով, ենթարկվել դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին և առանց դատական նիստը նախագահողի թույլտվության՝ չլքել դատարանի դահլիճը, եթե չի հայտարարվել ընդմիջում: Սույն պարտականությունների չկատարումը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.[1]-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ:

Փաստաբանի դատավարական պարտականությունները կազմում են նրա իրավական կարգավիճակի կարևոր մասը, քանի որ փաստաբանն ունի կրկնակի առաքելություն՝ մի կողմից պաշտպանել իր վստահորդի շահերն օրենքով չարգելված բոլոր միջոցներով, իսկ մյուս կողմից նպաստել դատարանի կողմից պատշաճ արդարադատության իրականացմանը: Վերջինս կարող է իրացվել, եթե փաստաբանն ըստ պատշաճի պահպանում է դատավարական ընթացակարգի կանոնները, իր վարքագծով նպաստում է դատարանի կողմից գործի արագ և օբյեկտիվ քննությանը: Դա ներառում է նաև փաստաբանի կողմից դատարանի օրինական կարգադրություններին և դատական նիստի սահմանված կարգին անշեղորեն հետևելը՝ այդպիսով դատարանի նկատմամբ ցուցաբերելով հարգանք, որպիսի պարտականությունը նրա վրա դրված է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, այնպես էլ՝ Կանոնագրքով:

Հատկանշական է, որ նախկինում Պալատի խորհուրդը դատարանի դահլիճն առանց նախագահողի թույլտվության լքելու փաստաբանի վարքագիծը համարել է Կանոնագրքի դրույթներին հակասող: Այսպես, ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (նախագահող՝ Ռուբեն Սահակյան) 16.11.2009թ. թիվ 29/1-Ա որոշմամբ փաստաբան Սեդա Սաֆարյանին ենթարկել է կարգապահական պատասխանատվության, այն բանի համար, որ փաստաբանը ***«..խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքը և առանց նախագահողի թույլտվության լքել է դատական նիստերի դահլիճը: Հետևաբար, նրա արարքում առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի և Պալատի կանոնադրության պահանջների խախտման հատկանիշներ:***»:

Խորհուրդը նմանատիպ դիրքորոշում է արտահայտել նաև 23.11.2012թ. թիվ 22-ԿԳ/1-Ա և 22.02.2013թ. թիվ № 7-ԿԳ/1 Ա որոշումներով:

Այս ընդհանուր մոտեցումից, Պալատի խորհուրդը նախկինում շեղվել է միայն այն դեպքերում, երբ արձանագրել է դահլիճը լքելու ծանրակշիռ պատճառներ: Այսպես՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (նախագահող՝ Ռուբեն Սահակյան, զեկուցող՝ խորհրդի անդամ Արա Զոհրաբյան) 12.11.2008թ. թիվ 22/11-Ա որոշմամբ փաստաբաններ Արա Զաքարյանի, Արթուր Գրիգորյանի և Դիանա Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել է, ըստ էության, այն հիմքով, որ՝ նշված քրեական գործով դատավորի ոչ օրինական գործողություններն այլընտրանք չեն թողել փաստաբաններին: Պալատի խորհուրդը նշել է հետևյալը՝ «..***Ինչպես կարող է դատավորը կողմերին ուղարկել որոշում, իսկ դրանից մոտ 50 օր անց, երբ համոզվելով, որ ուղարկված որոշումն իր մեջ լուրջ թերություն է պարունակել, հայտարարել, որ իր մոտ այդ նույն ամսաթվով մեկ այլ որոշում էլ կա, սակայն այլ բովանդակությամբ:.. Դատավորի գործողությունների արդյունքում խախտվում են***

փաստաբանության անկախության և օրինապահության սկզբունքները: Փաստաբանը ստիպված է լինում դահլիճը լքելու միջոցով առարկել դատավորի ոչ օրինական գործողությունների դեմ:»: Պալատի խորհուրդը հայտնել է նաև հետևյալ դիրքորոշումը՝ «***Պալատի խորհուրդը միաժամանակ գտնում է, որ փաստաբանները իրավունք չունեն առանց նախագահող դատավորի թույլտվության լքելու դատական նիստերի դահլիճը և պարտավոր են հարգանք դրսևորել դատավորի և դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ: Այս մոտեցումից շեղումը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն, բացառությամբ, երբ առկա կլինեն ծանրակշիռ պատճառներ:»:***

Պալատի խորհուրդը Պատասխանողի՝ դահլիճը լքելու վարքագիծը քննարկելիս, ուսումնասիրության առարկա է դարձնում նաև այդ վարքագծի դրսևորման պատճառները:

Պալատի Խորհուրդը, սույն գործի քննության համար էական է համարում հետևյալ փաստը՝ թիվ ԱՎԴ1/0042/01/17 քրեական գործը դատավոր Հ. Պետրոսյանի 27.02.2018թ. որոշմամբ փոխանցվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին, որն իրավասու էր քննել այն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. դատարանը, պարզելով, որ ստացված գործն ընդդատյա չէ իրեն, այն ուղարկում է ըստ ընդդատության.
2. Եթե սույն օրենսգրքի 44, 47 կամ 48 հոդվածով նախատեսված ընդդատության կարգի խախտումը հայտնաբերվում է դատական քննության ժամանակ, ապա կողմերի համաձայնությամբ դատարանն իրավասու է գործը թողնել իր վարույթում: **<u>Կողմերից մեկի առարկության դեպքում գործի կատարված դատական քննությունը չեղյալ է համարվում, և գործն ուղարկվում է ըստ ընդդատության</u>**:

Նման պայմաններում, երբ գործն ուղարկվել է նոր քննության, Պալատի խորհուրդը գտնում է , որ իրավաբանորեն դատական քննությունը չեղյալ է համարված: Հետևաբար, փաստաբան Կ.Հովհաննիսյանին վերագրվող արարքի հետ կապված դատարանի դիքորոշումը չի կարող իրավական հետևանք առաջացնել փաստաբանի համար:

Միաժամանակ, Պալատի խորհուրդն արձանագրում է, որ ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշումը վերադասությամբ բողոքարկելու գործողությունը չի կարող փաստաբանին իրավունք վերապահել լքել դատարանի դահլիճը առանց նախագահողի թույլտվության:

<u>7.2. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման մասով.</u>

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Սույն որոշման 7.1 կետում նշված հիմքով, Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով հարուցված կարգապահական վարույթը նույնպես ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 28.12.2017թ. թիվ 488-Ա/ԿԳ-17194 որոշմամբ փաստաբան Կարեն Հովհաննիսյանի (արտոնագիր՝ թիվ 1212) նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան

24 հուլիսի 2018թ.
թիվ ԿԳ/141-Ա
ք. Երևան